

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պաշտարանի համար	12 ֆր.
արեկալի վեցամսեայ	7 "
Արտասահմանի համար	15 ֆր.
արեկալի վեցամսեայ	8 "
Անտրեկալի համար	3 ֆր.
արեկալի վեցամսեայ	1.50 "

Ծանուցումն տղր ու աստիճանի համար 40 սանթիմ խոյ վերջին երեսին համար 20 սանթիմ է, երեսին ու երկուսին համար 20 օ/օ զեղը կրլույն:

Վաճառքի համար ձեռք 40 սանթիմ է

ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳՅՈՒՆ. ԲԱՂԱԲԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏ՝ ԲԱԿՈՒԻ ՉՈՐԵՎՇՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

ОТГОВОРНИКЪ: СТЕПАНЪ ВАНАРЯНЪ

Դասակն և դրամ դրկն խմբագրութեան հասցեին

Редакция на вѣстникъ "Шаржумъ" Варна

Redaction du journal "Charjoum" Varna (Bulgarie)

Պաշտարանի համար ձեռք

15 ՍԱՆԹԻՄ Արտասահմանի համար ձեռք

20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք և չեմ տրուի

ՇԱՐՋՈՒՄԻ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒԹՅՈՒՆ ԲԱԺՆԵՐԻՆԸ ՊԵՏԻ Է ԿԱՆԻՆԻ ԿՃԱՐԻ

Café Promenade Vienne

Այս շքեղ սրճարանը կը գրառնուի Վիեննայի ֆրանսիական քաղաքի միջոցով, որտեղ կը գրառնուի Վիեննայի ֆրանսիական քաղաքի միջոցով, որտեղ կը գրառնուի Վիեննայի ֆրանսիական քաղաքի միջոցով...

ՉԵՐԱԶ - ՄԵԼԻՔՈՎ՝ ՎԷՃԸ Փ Ա Կ Ո Ւ Ս

Ստորեւ կը հրատարակենք թարգմանաբար այս վեճիկն առ թիւ 8օր: Մելիքովի և իր վկաներու միջեւ փոխանակուած երկու նամակները որոնք «Օռօռ» թերթին մէջ երեւցան: Միւս նոյն ժամանակ Բարիզէն կը տեղեկացնեն մեզ թէ վեճը փակուած է արդէն առանց մենամարտի:

Սիրելի բարեկամ

«Առաւել»-ի 206 թիւին մէջ հրատարակուած յօդուածէ մը ինքզինքնիդ Նախատուած համարելով, պաշտօն յանձնեցիք մեզ այդ թերթին տնօրէն Պ. Մինաս Չերազէ կամ ներողութիւն եւ կամ մենամարտ պահանջել:

Պ. Չերազի նշանակած վկաները պըք. Ա. Պէնար եւ Կ. Փեհլիզանեան, զեկտ. 2-ին, միաձայնութեամբ տեղեկագիր մը ստորագրեցին որ ձեզի լիովին գոհացում կուտար եւ ուր պէտք եղած ներողութիւնը խնդրուած էր:

Դեկտ. 4-ին, առանց մեր միջնորդութեան դիմելու եւ ոչ ալ իր վկաներուն նամակ մը կուղարկէր ձեզի, որով կը յայտարարէր թէ չի բարեկամութեամբ իրենց արուած իրաւ սուրբնէն անդին անցած ըլլալով իր անունով արուած որոշումները ամբողջութեամբ կը մերժէր պարզապէս թէպէտեւ այդ ընթացքը պարտի էր բայց մենք զեկտ. 5 թուակիր նամակաւ մը կրկին դիմուած ըրինք պ. Մինաս Չերազին, խնդրելով որ նոր

վկաներ նշանակէ, միեւնոյն ատեն դիտել տարով իրեն թէ այս խնդիրը արդէն շատ երկար տեւած ըլլալով, այլեւս անհրաժեշտ էր լուծում մը տալ:

Դեկտեմբեր 7-ին ձեր հակառակորդը պատասխանեց թէ ա՛յ չուզէր իր բարեկամներուն կրկին ձանձրութիւն տալ, թէ ինք ինչ պատճառով յօդուած մը գրած էր եւ կատարակէր յօդուածը սրբազորոյ նամակ մը հրատարակել կամ եթէ հարկ ըլլայ, հայերէ բաղկացած պատուոյ ատեան մը կազմել:

Դեկտ. 3 թուակիր ուրիշ նամակաւ մը իրեն իմաց տուինք թէ այլեւս իրեն չի պատկանիր խնդիր իր ուղած կերպով կարգադրել՝ քանի որ սկիզբէն յանձն առած էր իր կողմէն վկաներ նշանակել. նաեւ «Առաւել»-ի 206 թիւին մէջ ձեր մասին իրատարակուած նախատուից պարբերութիւնները յիշեցնելով՝ կրկին խնդրեցինք որ վկաներ կարգէ:

Մեր այս նամակը անպատասխանի մնալուն ստիպուեցանք 11 թուակիր ուրիշ նամակով մը հաստատել զայն. Պ. Չերազի վերջին պայմանաձեւ մը սուրիք մեզ յանձնուած պաշտօնէն հրաժարելէ առաջ, յինչ որ իրեն համար կատարելու անուանարկութիւն մը պիտի ըլլար»:

Նկատելով որ մեր երկու նամակներն ալ անպատասխանի մնացին, կը խնդրենք որ մեզի ազատէք այլեւս պաշտօնէ մը զոր կարելիութիւն չունինք գործադրելու եւ որուն միջոցին ձայր աստիճան համբերատարութիւն ցոյց տուինք:

Հաճեցէք, սիրելի պարոն, ընդունել մեր ամբողջ համակրութեան ու ջերմ յարգանաց հաւատարմութիւնը:

Գ. Ֆրանզիզեան Բ. Գիլեան

Սիրելի բարեկամներ, Ստացայ ձեր նամակը, որով կիւսացնէք ինձի թէ Պ. Մինաս Չերազ հակառակ ազնուօրէն ձեր իրեն տուած ամեն անհրաժեշտ պայմանաձեւներուն, խոյս կուտայ ու եւ էր քաղաքութիւն տալէ:

Կը խորհէի որ այս մարդը զիս ծանրապէս նախատելէ ետք, քան չուրիշը պիտի ունենար գէթ կամ իր սխալը խոստովանելու եւ կամ անոր պատասխանատուութիւնը ստանձնելու:

Սակայն սխալը եմ. պիտի բարեհաճիք անշուշտ ներողամիտ գտնուել զձեզ այնքան երկարատեւ բանակցութեանց ստիպած ըլլալու համար՝ մարդու մը հետ որ իր իսկ կարգած վկաները ուրացաւ, եւ որ նախատե-

լէ ետքը, վատորէն խոյս տուաւ իր կանխամտածուած գործերուն հետեւանքներէն:

Հաճեցէք, սիրելի բարեկամներ, ընդունել ստագրին երախտագոյն հաւատարմութիւնը:

Տր. Յ. Լօրիս Մելիքով

Ս Լ Ա Յ Ի Կ Ն Օ Խ Ե Ր

ԿԱՐՈՆ ԲԱՅԱՆԱՆ ԵՒ ՌՈՒՍ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

Պարզ, միջին դասակարգէ ընտանիքի մը համեստ դաւակը, առանց բարձրաստիճան տնտեսներու առանց ակադեմիստի պիւրճառք փառքերու, կարօն քահանան կը հանդիսանայ այսօր ռուս յեղափոխութեան է՛ն պատկառելի դէմքերէն մէկը, Որք մնացած կանոնաւորութիւն, կարօն ինկած է Չեմստօրի մը բարեբար հովանաւորութեան տակ, որով և իր բնական ազատական գաղափարները գտած են աւելի լայն առկարէզ յառաջանալու: Յայտնի չէ բազմին որ մէկ խորհրդաւոր գաղտնիքով, կը նուիրուի աստուածաբանական ուսման, սակայն իր ծայրայեղ մտածումները կտրուեն ուսուցիչները հեռացնել զինքը եւ տալ իրեն համեստ հովուի մը պաշտօնը՝ խեղճուկ հօտի մը մօտ:

Կարօն կրնորի պաշտօնը և մինչև օրս ալ մնացած է հաստատարի նոյն պաշտօնին, ըլլալով միեւնոյն ժամանակ փուշ մը և հերետիկոս մը իր գիտատեսներու աչքին:

Որք յայտնի չէ անցեալ տարուան Յունուար 22-ի կարմիր կիրակին, որք յայտնի չէ թէ ատոր միակ հերոսը անձանթ ու համեստ քահանայ մըն էր, Եւ ահա այդ օրէն կարօն գործաւ մեծարելի և անուանի դէմք մը: Փախաւ Բեթերսպոլէն, եկաւ Եւրոպա, խօսեցաւ, ճգնեցաւ իրար բերել ռուս յեղ. ոյժերը, այլ շատ քիչ արդիւնք ունեցան ատենք: Վերջին ժամանակներս, վերստին Բարիզ գտնուած պահուն, «Մաթէն»-ի աշխատակիցներէն մէկը ունեցած էր այս փախտական քահանային հետ երկար տեսակցութիւն մը, որու ընթացքին պարզած էր շատ մը խնդիրներ եւ երեւան բերած այնպիսի տըխուր դէպքեր, որոնք, աւա՛ղ մեզ ալ անձանթ չեն մեր յեղափոխութեան տեսակէտով:

Սուսելով իր յոյսերուն, իր ծրա-

գիրներուն և իր առաջին ձեռնարկին վրայ, այսպէս է ըսած կարօն:

«Նախ քան այս թուականը, (Յունվ. 22) զէմտովօները միայն համարձակած էին շարք մը պահանջներ յարգել տալ: Ամբողջ ինքնին կը մնար մուշուռ չեզոք. խոնարհած լուծին տակ, չը յանդգնելով ձայն բարձրացնել: Այդ պահուն էր որ մտադրեցի հսկայ շարժում մը յառաջացնելու որ կարողանայ ցարին ուշը ժողովրդին վրայ զարնել: Արդէն երկար տեսակցութիւն մը ունեցած էի կոմս Մուրադիլիկի հետ և ըսած էի իրեն՝ թէ ժողովուրդը կը տառապի, ցոյց տուած էի իրեն կատարուելիք բարենորոգումները ու նախագուշակած որ՝ եթէ սոյն բարենորոգումները չիրագործուէին, մօտ էր օրը՝ երբ ժողովուրդը ինքնին պիտի գար իր իրաւունքները պահանջելու, կոմս Մուրադիլիկը բաւականացած էր ուսերը թօթուելով հեղանակաւորէն:

«Նս գիտեմ իմ պարտականութիւնս ու կը հետեւիմ ատոր, ըսած էր ան: Դուք, դուք ալ ձեր ունիք: Այս պարտականութիւնը, ուրեմն, չը թերացայ գործադրել: Շուտով, բանւորներու հետ միասին, իմ քաջարի ընկերներս, մէջտեղ ինկանք սարածելու մեր գաղափարները ու այս շարժումը կազմակերպելու:

«Մտադրութիւնս էր առաջնորդել ժողովուրդը ուղղակի ցարի պաշտօնի առաջ, Գիտէի թէ այս ընթացքով յղացած բարենորոգումներս անտարակուսելիօրէն պիտի իրագործուէին: Վասնզի երկուքէն մէկը. - կամ ցարը անձամբ պիտի իր ժողովրդին ներկայանար ու լսէր անոր և կամ, մերժելով՝ հրամայէր քողաքներուն ցրուել Առաջին զէպքին, ծանօթանալով ազգին զժբախտութեանց, պիտի անշուշտ համակերպէր: Իսկ հակառակ պարագային, ժողովուրդը, քողաքներու բռնի միջոցներուն՝ պիտի պատասխանէր բռնի միջոցներով, որով և յեղափոխութիւնը պիտի ապահովուէր: Բռնութիւնն էր որ նախապատուութիւն ստացաւ: Յունվ. 22-ի կոտորածները վճռեցին այսօրուան յեղափոխութիւնը, կարող չէի նախատեսել: Կարող չէի ինչպիսի վիճ մը պիտի տանէր ան ժողովուրդը...»

Կարօն քահանային այս ապաշաւի ցաւերը յաւիտենական յանկերգն է որ լսելի կընէ ամենուրեք, ո՛ւր որ ալ ըլլայ, որք ալ խօսի...

«Մէջ, շարունակած է հայր կարօն, կարող չէի նախատեսել, և այսօր հարկադրուած եմ ճանշնալ՝ որ այն միջոցները որ յղացած էի շատ կա-

նույն լինելու վնասակար էին ուս
բրոյէղարիան : Անշուշտ , Յունի-
22 ի ցոյցը մեծ ցնցում մը գործեց
ամբոխին վրայ : Նորհիւ ժողովրդին
ձեռք առած խաղաղ վարմունքին եւ
չնորհիւ գանձուք ընկճելու համար
կառավարութեան գործադրած բռնի
եղանակին : Այդ օրուան էսօժ ա-
րիւնն է որ ծլած է այժմ : Բայց ժո-
ղովուրդը , այդ օրէն ի վեր . անողոր-
մաբար վրէժխնդիր եղած է : Հարկ է
որ կանգ առնէ , եթէ չուզեր գահա-
վիճել յեղափոխութիւնը...

Բանութիւնը , այս պահուս , պիտի
սպառէ զինքը անօգուտ կերպով եւ
անխուսափելիօրէն յառաջ պիտի բերէ
հանելի ուխտաբուն մը , որ միայն ա
զատութեան գալուստին ուշացման
պիտի ծառայէ :

Մ. Յոյակ

(Շարունակելի)

ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆ

ԵՆՆՈՒԱԿԱՆ ԱՐԱՐԻՆ

ՀԵՂԻՆԱԿԵՐՈՒՆ

ԸՂԴԸ ԴԱՏԱԽԱՅԻՆ ՃԱՌԸ

— Ե —

(ԵՄԱՆՁՈՒՄԻ Ի-ԷՖՔԵՐԱՆԻ քաղուած)

(Շար. Ասի. քիւիւն)

Ժորիսէ լրացուցիչ տեղեկութիւն
ներ պահանջուեցաւ այս Սամուէլ
Յայնի ինքնութեան եւ նախկին ըն-
թացքին վրայ : Ժորիս պատասխանեց
թէ անիկայ Ռուսիացի Հայ յեղափո-
խական մըն էր եւ Պաքուի մէջ ու-
սուցիչ էր որ յետոյ վտարուեցաւ եւ
արտաքսուեցաւ Ռուսիայէ ուրիշ յե-
ղափոխական պետերու հետ եւ թէ
Սօֆիայի մէջ տեղի ունեցած պայ-
թիւնէն սպաննուելէ ետք անոր կեն-
սագրութիւնը եւ պատկերը հրատա-
րակուած էին Բարիքի Բ ր օ Ա ր մ է
ն ի ա լրագրին մէջ : Քաղով անոր
խառնարական զաղափարներուն եւ
գործադրութիւնը իրեն յանձնուած
եղեռնական որոշումներուն դէմ հան-
գամանքին , ժորիս յարեց թէ բացի
եղեռնական եւ անխաղաղ ձեռնար-
կէն , թէեւ ծրագրուած էր քանդել եւ
օղբ հանել պանթաներ , սեղանաւո-
րական հաստատութիւններ , պաշտօ-
նատուներ եւ ուրիշ պաշտօնական եւ
անհատական շէնքեր , եւ այսպէս զա-
նազան կողմեր խոտովութիւն եւ յե

ղափոխութիւն յարուցանել , սակայն
ծրագրին այս մասին գործադրու-
թիւնն այս առժամապէս յետաձգուած
էր :

Ժորիսէ պահանջուեցաւ տեղեկու-
թիւններ տալ նաեւ Պոլսոյ խոտով
բարական մասնաճիւղը կազմող մի
բոյնիկայ անձերուն ինքնութեան
մասին եւ ազդարարուեցաւ նաեւ որ
պէտք չէ ծածկել իր անիծապարս ըն-
կերներուն վրայ ունեցած ստոյգ տե-
ղեկութիւնները , քանի որ նոյն իսկ
իր խոտովանութեամբ ստուգուած է
թէ տեղեկակ էր այդ քովիղներուն
գործառնութեանց : Սակայն ժորիս
չուզեց ունէ քացատրութիւն տալ
այս մասին . միայն յարտաբերեց թէ
Բուսիկա Յայն՝ Սամուէլ Յայնի ազ-
ջիկը չէր , այլ Կովկասի բնաւորի
մը գաւազը որ իր երկրին մէջ կր-
թութիւն առած ատեն յեղափոխա-
կաններու միացուցում էր եւ թէ ա-
նոր բնաւորը չի գիտեր թէ ո՛ւր կր
գտնուի Բուսիկա որ Սամուէլ Յայնի
քով կ'ապրէր իբր անոր ազջիկն եւ
յեղափոխական գաղափարներու գոր-
ծադրութիւնը սկիզբէն մինչեւ վերջը
հետապնդելու իրեն նպատակակէտ ը-
րած յեղափոխական մըն է : Հիբա
Բիբոս այ Պաքուցի մըն մըն է , որ իր
երկրին մէջ մարդասպանութեամբ
ամբաստանուած եւ դատապարտուած ,
սակայն բանտէն խաղաղաբանութեամբ
փախչելով Դ ր օ շ ա կ յեղափոխա-
կան մարմնոյն միացած է , եւ յետոյ
իր իսկ պատասխանատուութեան տակ
կր վարէր այս տեղի խոտովարական
գործերը : Իսկ իր կինը կոչուած Սօ-
ֆի Մարի Զայն անուամբ ճանչցուած ,
ծագումով գերմանացի է , որ կովկասի
մէջ ծնած է , կովկասի յեղափոխա-
կաններուն կր վերաբերի եւ այդ
երկրին մէջ իրենց նպատակին գոր-
ծադրութեան աշխատողներէն է : Ի-
րարմէ բոլորովին անջառ ըլլալով
իր հարկին սովորաբար մէկզմէկու օ-
ժանդակող ուրիշ Հայ քովիղներ
Թիֆլիզէն ժորիզէ կանչեցին այդ կի-
նը , իբրեւ գործադրութեան միջոց , որ
Հիբա Բիբոսի հետ միանալով , իրենց
միջեւ ապօրէն յարաբերութիւն հաս-
տատուեցաւ եւ այս պատճառով սկսան
այր եւ կին միասին ապրիլ : Քարը
Ենովանովի Պոլսեցի է , իսկ Թրասա
Ենովանովի Ռուսիացի , Սիլվիո Ռիլի
կամ Վտանի ո՛ւր տեղացի ըլլալը չի
գիտեր ժորիս . Քարը Ենովանովիչի
հետ գտնուած տիկին Ալքովա Ռու-
սիացի է . որ յեղափոխական ինքնակ-
ցութեանց միջնորդ ըլլալը եւ կր
զիւրացնէր յարաբերութիւնները

Գործիչներուն միջեւ , բայց եղե-
նական արարքէն բաւական ժամանակ
տալով Պոլսէն փախած էր :

Ժորիս վերջ ի վերջոյ պնդեց սա-
կայն որ ատենց եւ ուրիշ անձերու
մասին ունէ տեղեկութիւն չունի :

Հետեւաբար , մասնաւոր քննիչ
յանձնաժողովին աշխատութեանց եւ
յարատեւ ջանքերուն շնորհիւ քննու-
թիւնները որչափ առաջ տարուեցան ,
նոյնչափ անժխտելիօրէն երեւան հան-
ուեցան անիծապարս անձերուն ինք-
նութիւնները եւ խոտովարական
արարքներն ու գործողութիւնները ,
եւ ասիկայ կայս . ամենամեծ յաջո-
ղութիւններէն ըլլալով , մէկիկ մէ-
կիկ ամբաստանաբեկներուն երեսին
զարեւեցան երեսն հանուած եղեռ-
նական միջոցները , արարքները եւ
ամէն կարգի ձեռնարկները :

Նախ եւ առաջ ձեռք անդուցինք
Բիբոսի Բիբոսի Բարիքի մէջ հրատա-
րակած օրո Արմէնիա լրագրին եր-
կու տարուան հաւատարմութիւնը : Բիբո-
սի յայտ իր անիծապարս գաղա-
փարներով Ենովանի մէջ հոչակ հա-
նած ֆրանսացի հեղինակ մըն է եւ
իր հրատարակած թերթն այ Հայ յե-
ղափոխականներու օրկանը : Մէկիկ
մէկիկ քննուելով եւ կարգադրելով
այդ թերթերը , հասկցուեցաւ որ Հայ
յեղափոխականները 1904 ի փետրուա-
րին Սօֆիայի մէջ գումարում մը ու-
նեցան , որուն թանակցութիւններն
ու որոշումները թէեւ գաղտնի պա-
հել որոշեցին , սակայն այն գումա-
րունէն ետք իրենց հրատարակած
մէկ յայտարարութեան ինչ ինչ մա-
սերը թարգմանել տալով , սա հաս-
տատու տեսնուեցաւ թէ , Հայ յեղա-
փոխականները որոշած են այս եւս
ամենէն վճռական եւ ամենէն վերջ-
նական գործողութեան ձեռնարկել ,
Այս պարբերութիւնը կասկած չը կայ
որ կ'ապրիկանէր . Աստուած հեռու
ընէ , իրենց մտադրած եղեռնական
արարքին : Ասկէ զատ Բիբոսի Բիբոս
իր ուրիշ մէկ յոշուածովը ինչ ինչ
սպառնական անիծապարս բառեր
գործածած էր լարեկամ տէրութեանց
Պոլսոյ յարգելի զեպպաններուն հա-
ցէին , նոյն թերթերուն մէջ կար-
դացուեցաւ նաեւ որ ակնարկու-
թիւններ կային Հայ յեղափոխական-
ներու անգամներէն Պոլսոյ , Բերա եւ
Իզմիր բնակողներու կողմէ ապագային
կատարուելիք եղեռնական արարք
ներու նկատմամբ : Հետեւաբար , այս
եւս կասկած չկար թէ , այդ տնձն ալ
Հայ յեղափոխականներու խումբէն
էր :

Սիլվիո Ռիլի համար հաստատա-
պէս ապացուցուած է թէ , մէկ ու
կէս տարի առաջ , Օսմ . Պանթալին
զիմացը լուսանկարչական գործիքնե-
րու վաճառատուն մը կը գտնուէր :
Կենտրոն կատարուելով , հաստատ-
ուեցաւ որ Սիլվիո Ռիլի Հայ յեղա-
փոխականներէն Ռուսիացի Քարեգին
Կարակոզոֆ անուն անձին՝ Օսմ .
Պանթալին զէմ վարձած այդ խանու-
թիւն մէջ միջոց մը լուսանկարչական
գործիքներ ծախելու զբաղած է , Ետ-
ք Քարեգին Կարակոզոֆ զինուո-
րական պարտականութիւնը կատարե-
լու համար Ռուսիա մեկնած է եւ ա-
նոր տեղը մնացած է Սիլվիո Ռիլի ,
որ այն կողմերը գտնուող ներկի
վաճառական Աճէմնարէ 30 հատ ներ-
կով լեցուն տակառ քննելով , զանոնք
փոխադրած է խանութը , Այս տա-
կանները բնաւ աննշուած չունէին
իր լուսանկարչական արեւստին հետ ,
եւ սակայն Սիլվիո Ռիլի զանոնք պի-
տի գործածէր Օսմ . Պանթալին զիմաց
գտնելու տակէն իրենց փորելիք հո-
ղերը կրելու եւ դուրս հանելու հա-
մար : Այս ծրագրերը Բիկիւրութեան
կողմէ յետաձգուած եւ ոստիկանու-
թեան ալ ուշադրութիւնը հրաւիրած
ըլլալով , Սիլվիո Ռիլի ստիպուած է
թողուլ նոյն խանութը :

(Շարունակելի)

ՕՐԸ ՕՐԻՆ

Հեռագիրները ծանուցին թէ՛
Հունգարիոյ դահլիճի նախարա-
րապետ Յայէրվարին , չը կարե
նալով ունէ կերպով , կառավա-
րական հարցի լուծման , յանգիլ ,
ներկայացուցած է իր հրաժարա-
կանը . սակայն կայսրը մերժած
է զայն . ընդունելով : Հունգարիոյ
վիճակը շատոնց ի վեր վարդա-
գոյն չէ . նա տարիներէ ի վեր
Աւստրիոյ դէմ զարգացումի եւ
յառաջխաղացումի պատերազմ
կը մղէ : Արթուրով խնդիրը սուր
կերպարած կառնէ , որ կրնայ
նոյնիսկ երկու դաշնակաձուլուած
կառավարութիւններու բաժան-
ման պատճառ ըլլալ . զոր բնաւ
ցանկալի չէ Վիէնայի դահլի-
ճին : Այս իսկ պատճառով ամէն
ճիգ կը թափուի Հասպուրկներ-
րու կայսրութեան զննասակար այս

Գ Ր Ե Յ
ՕԳՏԱՎ ՍԻՌՊՕ
ՀԱՅՐ ԲԱՆՖԻԼ
(Թարգմանուած Ֆրանսերենէ)

— Դրամ ունի՞ք . հարցուց արքան
մէկէն իմէկ :
— Ես միշտ գրամ կուներեմ պա-
տասխանեց Հայր Բանֆիլ : Ընդ
ուրիշ օր է որ վերադարձայ Հունգա-
րիայէն : Ծամբորդութիւնը յաջող ե-
ղաւ... Կոստան մէջ... օ՛հ , շատ թոհաֆ
բան է... Երեւակայեցէք որ ես , գե-
րապաշտանն սուներ իջած էի... շատ
զուարթ . շատ կատակասէր , եւ շատ

ազնուասիրտ մարդ մը... ինծի կրակը՝
հայր իմ . Մարտէյի զը երգե-
ցէք , հարիւր ֆիորին կուտամ ձեզիս
Մարտէյիզը կերպէի բոլոր ուժովս ,
եւ , իբրեւ զանգամ միւր , գերտ-
պայծառ հարիւր ֆիորին կուտար...
Տասներկու անգամ երգեցի : Եւ քի-
թին տակէն մոյտաց՝— Մենք պիտի
զիմենք սասպարէզ...
— Ըսել է Մարտէյիզը գիտէք կոր ,
հարցուց Թիւլ որ չը կրցաւ խնդուքը
բռնել :
— Ինչ պիտեք , անեցուց մար-
դու կը զուրբ թոթուելով . համա-
կերպող երեսոյթով մը... Մեր գործին
մէջ , ամէն բանէ հասկնալու է քիչ
մը... շատ անգամ տալոյրիակ մար-
դոց հետ գործ կուներես... այսպէս ,
զալ տարի նորէն Արիւելք կերթամ .
ատ ալ ուրիշ պատմութիւն մըն է...

Այդ երկրին մէջ ալ , կը խնդան Մար-
տէյիզին վրայ... անոնց ուզածն ալ
սա է , որ իրենց ըստ թէ ինչպէս կը
հագուին... Բարիքի վերջին նորոյթը...
Ես ալ մտաւորապէս , միտքս եկա
ծը կրեմ իրեն... եւ գո՛հ կրլլան :
Թիւլ մտիկ չէր ընել այնքա եւ կը
խորհրդածէր :
Նուաճուելիք այդ արգելքին դէմ
գտնուելէն ի վեր , բոլոր իր ետնդը
բոլոր իր անհամբերութեան տենդը
վրան եկած էր :
Թիւլ խորհեցաւ որ հայր Բան-
ֆիլի ջանջանութիւնները կարճ կա
պելու էր , բուն կէտին հասնելով
(, Արքա Թիւլ թանգարան մը ու-
նենալու բուն ըզջանքէն բռնուած ,
է , ու մտադրած է թանգարանին
հարկ եղած գումարը շորքել հայր
Բանֆիլէն :

Կոպտօնէ , փոխանակ նրբութիւննե-
րու մէջ մոլորելու որովք գուցէ ան-
յաջողութեան մատնուէին ճամբանե-
րու ձեռուկ չըլլելի մը հետ . որպի-
սին էր հայր Բանֆիլ : Աւելի աղէկ
էր զայն չուարեցնել , շմորեցնել
լախտի հարուածով մը , ճիգ տեղին
զարեկով ուժակով : Ի՞ժանք կեր-
պարեք մը առնելով՝ չուա՛ւ :
— Ձեր փուճուճուճ խօսքերը մտիկ
ընելու չեմ եկած հոս , փերապատ-
ուելի հայր , կը խնդրեմ որ երկու
վայրկեան ուշադրութիւն շնորհէք
ինծի... Գործ մը ունիմ , մեծ գործ մը...
որուն համար շատ դրամ պէտք է
ինծի : Նախ կուզեմ հանգաբանեցնել
ձեր խիղճը... խնդրեմ միայն եկեղե-
ցի մը շինելու պատրուակով օտար
երկրներ ելլալու զուարճանալուն
վրայ չէ... ո՛չ , խնդրեմ ուրիշ բանի

դրութիւնը չեզոքացնելու հա- մար :

Հունգարացիք, Հապսպուրկի իշխանական ցեղի գէժ չէ որ կը կուռն, որովհետեւ հապսպուր- կի իշխան մը, երեսուն տարի- ներ, սահմանադրութեամբ իշխած է անոնց վրայ, Աւստրիական հա- րստութեան սան տէրը ըլլալէ առաջ :

Երբ թըրական բռնակալու- թիւնը 1727 թուականներին իս- կական վտանգ մըն էր դարձած հուգարական իշխանութեան գո- լութեան, այն ժամանակուան կա- ռավարութիւնը հարկադրուած նետուեցաւ իր դրացիին գիրկը : 1867 զարուն մէջ Հապսպուրկի ցեղը չը զիջանցաւ սահմանադ- րութեամբ իշխելու, որ յետոյ 1867ին դաշինքով մը արգի ծրանց եւ- սեֆ կայսրը ընդունեց :

Օրէնքը և իրաւունքը հունգա- րացիներուն կողմն է : Հունգա- րիան կուզէ ըլլալ ինքնիշխան պահելով հանդերձ արգի պետա- կան իշխանութեան բաժանումի դրութիւնը : Նա կուզէ ունենալ օտար երկիրներու մէջ իր անճ- նակի ներկայացուցչութիւնը, բանակի պաշտօնական լեզուի հունգարերէն ըլլալը : Եւ այլն...

Չը կարծուիր որ Հունգարիան իր զարգացումի համար մղած կր- ուիտի մղած բաժնուիլ բոլորովին և աստրիական սղգը յանձնել գրացի լեզուակից կառավարու- թեան իշխանութեան, որով պատճառ ըլլալ, Եւրոպիոյ կեդ- րոնին մէջ պերճանական ահաւոր իշխանութեան մը ստեղծումին, որ կը կազմէ Արիւնդի Բ. ի գոր- նանային երազներէն մին :

Հունգար ազգի, զայդացումի համար մղած խաղաղ պատերազ մը, սթափած է աստրիական կայսրութեան ամբողջութիւնը կազմող այլապան ցեղերը, որոնք այսօր ձայն կը բարձրացնեն և կը պահանջեն ընտրողական ի- րաւունք :

Եւ եթէ Գոշուգեան հոսանքը զօրանայ Ազգալին կուսակցու-

թեան պահանջներուն հետ ճու- լութիւնով հարկ ըլլայ բաժանում, ու այսպէս առաջացնել աստրի- ական կայսրութեան քայքայու- մը, անոնք որպէս կարող ու հե- առտես ազգ, ամէն ճիգ թափե- լու են բայրաժին ընել Աւստ- րիան, ու փոքրիկ-փոքրիկ ինք նախոր իշխանութեանց համա- տեղութեան մը վերածել աստ- րիական երկիրը, ստեղծել պալ- քանեան թերակղզիի իշխանու- թիւններէ բաղկացած դաշնակ- ցական ամբողջութիւն մը ու այս- պէս զօրացած ու ամբապնդուած, ժամանակին պահանջներուն հա- մեմատ ծաղկիլ ու բարգաւաճիլ :

Անցեալ շաբաթ Պոլսէն քաչ- ուած հեռագիր մը կը ծանուցա- նէր թէ՛ «Համբիտի» գորագնդին հայկական նահանգներու մէջ ներկայութեան մասին, տէրու- թեանց դեսպանները բողոքած են : Ասիկայ ինքնին մութ է, վայրկի մը մտածել կուտայ թէ՛ կոտորածներու սեւ ամ- պերը վերստին կը սաւառնին հայկական նահանգներու վրայ :

Համբիտի զօրագուցողը արդէն իր ստեղծումէն ի վեր միշտ կը դեգերէր հայկական նահանգնե- րու մէջ և գործած շահատակու- թիւնները չունին չափ ու սահ- ման : Այսօր ելնել ու բարձրել տնոնց ներկայութեան մասին միայն (!) դա կը թուի անհա- ւատալի :

Անցեալը օրինակ, Այս հեռագիրը աւելի են- թագրել կուտայ թէ՛ արդէն հայկական նահանգներու մէջ կը արիւսպետէ ահ ու սարսափ, ճը մեար վրայ գալով՝ կոտորածներու նախերգանքը սկսած է : Եւրոպա- կան լրագրիւններէն ոմանք ծա- նուցին արդէն շաբաթներ առաջ թէ՛ Երզրումի մէջ կոտորած ե- ղած է :

Ուստի մարգարէանալու պէտք չը կայ այժմէն իսկ գուշակելու համար թէ՛ վայրկեանէ վայրկ

եան սպասելու ենք քստմնե- ցուցիչ լուրերու կողպուտ, ջարդ, ինչ որ միայն կարծես բաժինն հայուն :

Աւստրիան այս արհաւիրք- ներուն մէջ խարխուլ փոխով, հայը չ'զգաստացաւ, ամէն բան կը սպա- սէ Եւրոպայէն : Եւրոպան չը գի- տեր խղճալ ու զղջալ, նա սիրտ չունի, նա միայն գիտէ պաշտ- պանը հանդիսանալ իր շահերուն : անոնց վերականգնումի ու զար- գացումի համար ջարդել ու փրչ- րել :

Որպէս թէ Եւրոպիոյ ուշագ- րութիւնը գրաւելու համար մեր վրայ, Այս Հայրենիքէն դուրս սարքուած շարժումներով, զար- կով մը կուզենք յեղափոխութիւն ստեղծել, որոնց արձագանքը իսկ գո'ւցէ չը հասնիր մինչեւ Հայրենիքի սահման : հայը պարաստուելով, զօրանալով ստեղծելու է պատկառելի ոյժ մայր երկրի մէջ, պարսկական կառավարութեան շահերու հետ զուգեղով մեր շահերը, ու այսպէս ոտքի կանգնած, թերեւս մենք կը գրաւենք Եւրոպիոյ համակ- րանքը ու կը գիւրացնենք Հա- յաստանի ստեղծագործումը : Այս անկարելի է, զարգեցնենք վայ- րի մը ամէն ապստամբական շարժում, սեղմենք մեր շար- քերը : փոխանա՛ զէնքի հրաւեր կարգալու և պա- րապ տեղը գրամներ վատնելու, խոփհինք յեղափոխական գաղա- փարներու զարգացման ու ծա- ւալման համար քարոզչութիւն- ստեղծել Հայաստանի մէջ, մանրազնին ուսումնասիրելով մեզ շրջապատող ցեղերը՝ սպասել ուսակական կայսրութեան յեղա- փոխութեան վերջը՝ որմէ կա- խում ունի և հայուն բազղը :

Գամպէլ Պանէրման պարզած է նոր նախարարութեան գործու- նէութեան ծրագիրը : Խօսելով արտաքին քաղաքականութեան վրայ, նախարարապետը բուռն

գոհունակութիւն յայտնած է ծրան սայի հետ եղած համաձայնու- թեան մասին, աւելցնելով թէ՛ գահլիճը պիտի հետեւի մերձե- ցումի քաղաքականութեան : և Կերմանիոյ հետ անհամաձայնու- թեան ու է պատճառ մը չը տես ներ, նկատել տուած է միանգա- մայն թէ՛ Անգլիոյ յարաբերու- թիւնը միւս երրոպական տէրու- թիւններու հետ ալ բարեկամա- կան է : և յայտնած է թէ՛ ազատա- կաններու ընդհանուր քաղաքա- կանութիւնը պիտի ըլլայ այն՝ ինչ որ էր առաջ, երբ ընդդի- մադիր կուսակցութիւնը կը կազ- մէին : Որովհետեւ կը բաղձան որ Անգլիան գործէ միւս ազգե- րու հետ : ազգերու ընդհանուր դատին համար :

Սըր Գամպէլ Պանէրմանը ու- րախութիւն յայտնած է թէ՛ իրաւ արանական սկզբունքը մինչեւ այն աստիճանի հասած է որ, այլեւս տկարութեան չը վերագ- րուիր, եթէ մեծ պետութիւն մը խնդրին լուծու մը յանձնէ իրաւա- բանական դատարանին :

2.

ՊԱՐԱՀԱՆԴԵՍԸ

Ասկէ մէկ երկու շաբաթ առաջ թերթերու միջոցաւ ծանուցուած ի նպաստ «Հայկական Ընթերցարան»ի պարահանդէսը տեղի ունեցաւ ճիշդ որոշեալ օրին դեկտ. 3ին :

Ինչպէս ուրիշներ, նոյնպէս ես փափաքեցայ ներկայ գտնուիլ այդ շքեղ պարահանդէսին որուն նմանը իրաւ տեսնուած չըլլալ կը կարծեմ գոնէ մեր հայերու մէջ :

Ժամը 9նէն, արդէն սկսան սրահ մանել հանդիսականները բայց ան- նըշմարելի կերպով, վասնզի անոնց- մէ շատերն, դժբաղդաբար զուրկ է- ին տա՛մ ան երէ, որոնք արդէն կրնային փայլ մը տալ պարահանդէ- սին եթէ չը զլանային իրենց ներկա- յութիւնը :

10ին արդէն սկսած էր բողոքող- ներու թիւը շատնալ պարին սկզբ- նաւորութեանը համար, բայց վար- չութիւնը տակաւին Տաման երու կրսպասէր, եւ ասի շատ բնական էր Առանց վարդի գարուն չի գար, կը-

մը, շատ գեղեցիկ, շատ մեծ, և և շատ քրտտոնէլ պայտի լանի մը վրայ է... Եթէ խնդիրը ձեզի պարզեմ, հա-ւանական է որ բնաւ չպիտի հասկը- նաք : կը կրկնեմ, ինծի դրամ պէտք է... Որովհետեւ գուք ունիք, տուէք ինծի...

—Չեմ կրնար, պատասխանեց հայր Բանֆիլ պազօրէն, որուն գէժքին պահման անհոգ գուարթութեանը յա- ջորդած էր առաքելի երազուն լը- ջութիւնը :

Ժիւլ ոտքի ելաւ յեղակարծ բար- կութեանէ մը մղուած :

Յնցումի մը, ապուրթեան մը, ջախջախումի մը վերջապէս անեղ բանի մը կրսպասէր : Եւ անա մար գուկը հանդարտօրէն բսած էր «չեմ կրնար», անանկ հանդարտ, անանկ անողոք չեչտով մը, որուն մէջ կըզ-

գայիր վճռական որոշում մը : Ինք զինքը զսպելով՝ վանականին նայե- ցաւ : Քանի մը խճաքարեր սահած էին անոր տակէն : Կամացուկ մը շտկուեցաւ, սրունքները աւելի վեր առաւ : Եւ ջուրի կաթիլներ գողգո- ղային անոր մօրուքին վրայ :

—Չէք կրնար, մրմառց արբան :

—Ո՛չ :

—Ազգի ստիկ ըրէք... Չէք կրնար :

—Ո՛չ... Եթէ աստուածահաճոյ գործ մը ունիք, ինծի պէս ըրէք... ճամ բաները բաց են :

Ժիւլ բորբոքեցաւ :

—Ուրեմի զիս դատարկաշրջիկ մը քսակահատ մը, յետին սինլքո՛ր մը կը կարծէք :

—Դուք զուք էք, ես ալ ես եմ... Ի՞նչու կը սրողդիք :

—Նորէն կըսեմ, չէք կրնար :

—Չեմ կրնար :

Արբան իր կուրը ճօճեց օդին մէջ :

—Ազգ'կ... ես ալ թեմին մէջ մու- րայնիք պիտի արգիլեմ... ոստիկան- ները օձիքնիք բռնելով բանտ պիտի նետեն ձեզ... :

—Օ՛հ, ըրաւ Հայր Բանֆիլ, տրտ մ'օրէն գլուխը շարժելով... Թէ՛մին մէջ գործ չունիմ... այլեւս բան չեն տար ինծի... Գալով բանտին, գէշ մարդիկներ, շատ անգամ, զիս ձեր- բակալելով՝ բանտ նետած են... Եւ աւելի հեշտ է բանտը պառկիլ քան թէ՛ ճամբաներու խոնաւ եզերքին վը- րայ :


Այն ատեն Հոռոմ պիտի գրեմ... ասկէ վա՛նտել պիտի տամ զձեզ... ձեզի պիտի մատնեմ ձեր մեծաւորին, Պապին... Պիտի ըսեմ ձեր ով ըլլալը, ձեր բոլոր պատմութիւնները, բոլոր

ազտտութիւնները, բոլոր ոճիրնե- րը... պիտի մատնեմ զձեզ, կը լսէք կոր, ձեր գատարկապորտ :

—Մեծաւորը զիս կը ճանչնայ... Պապը զիս կը ճանչնայ... Եւ յետոյ, ալ աւելի բարձր մէկը կայ որ զիս աւելի աղէկ կը ճանչնայ... ցուցա- մատը բարձրացուց, երկինքը ցոյց տուաւ եւ աւելցուց :

—Աստուած... բնաւ չեմ վախնար :

(Շարունակելի)



սէ անոսը . կէս ժամ ալ անցաւ բայց հազիւ 18 Տ մ աներ հաճած էին փութալ փոխան 60 -8 : Ք ա վ ա լ ի - ներու . վերջապէս մարշ մը գարնուեցաւ եւ պարը սկսաւ ի մեծ ուրախութիւն արդէն ժամերով ուղի վրայ մնացող օրիորդներու եւ պարոններու որոնք առաջին սինեալին կրպակէին որպէս զի դառնալ սկսին . բայց դժբաղդարար . այդ սինեալը շատ քիչ ազդեց բազմաթիւ երիտասարդներու վրայ երբ 5 վայրկեանէ վերջ շուրջներին պար պուած տեսան 9-10 պարող տամաներն . սակայն պարահանդէս կը գտնուէին եւ պարահանդէս գտնուողը խաղալու ստիպուած էր . բայց երբ Տ մ մ ա շ ի կար . ի՞նչ ընել . ասոր միջոցը գտան . գրկելով զիրար դառնալ սկսան մեծ նախատինք եւ այն սեռակիցներուն եւ պարահանդէսի կարգադրիչ յանձնախմբին .

Վերջացնելէ առաջ երկուսուս կուգեմ երկու խօսք ալ ընել մէկ երկու պարոններուն անվայլ ընթացքին որոնք մտածած էին պահ մը ընտանեկան պարահանդէսի մը մէջ գտնուել նին . եւ սակայն անոնցմէ աւելի դատապարտելի հսկիչ մարմիններն էին որոնք բոլորն ալ գրեթէ լուս մնացին այդ շափազանց անտեղիութեանց առջեւ .

Եւ որպէսզի ուրիշ առիթու ծագր ու ծանակ չըլլանք օտարներու առջեւ նախապէս հարկ է խորհիւք ինքզինքնուս վրայ եւ ապա գործենք :

Ըստ իս աւելի լաւ է որ մենք մեր գրեթեմէն անդին չանցնինք ինչպէս կօշկակարը կօշիկէն անդին .

Ներկայ մը

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Բ. Դուռը պատասխանեց Ռուսիոյ և Աւստրիոյ ազգագրին որով թուրքիոյ ուշագրութիւնը կը հրաւիրուէր այն անիշխանական կացութեան վրայ որ կը տիրապետէ Ետիոյի և Վէլէսի նահանգներուն մէջ . Հիւսիսային հրամայուած է պետք եղած միջոցները ձեռք առնել . վերոյիշեալ նահանգներու մէջ կարգը վերահաստատելու համար . երկու կառավարութեանց զեպսանները գոհ մնացած են այս պատասխանէն . որ կատարեալ պիտոտնական հանգամանք ունի . եթէ ստոյգ բան մը կայ . այն ալ ու է փոփոխութեան մը չիրականալն է :

— Պոլիս .— Պէլճիքական զեպսանութիւնը դեռ եւս ընդունած չէ՞ պատասխանը այն ազգագրի . որ ուղղած է Դրան . որով նա կը պահանջէ . Սուլթանի դէմ սարքուած մահափորձի առթիւ . մահուան դատապարտուած . Պէլճիքական հպատակ փորխի իրեն յանձնուիլը :

Կառավարական խորհուրդը դեռ եւս իր վերջին խօսքը ըսած չըլլալուն համար . գատափճուի մասին . այս իսկ պատճառով դատուածներէն և ոչ մին դեռ սպաննուած է :

— Մակեդոնական Ելեմտական յանձնախմբին համար . դեռ եւս թրքական խորհրդատուն որոշուած չէ . և այս արգելք կը հանդիսանայ Սերանիկի մէջ յանձնախմբին կազմակերպուելուն :

Դեպքանները կը պիտոտն որ այս մասին հարկ եղած որոշումը իրական իրագործուի :

— (ՌՈՒՐՔԻՆ) —

Ցարսքոէ սէլօին մէջ . սեպի ունեցած է կառավարական խորհուրդ մը . որ ընտրուական հարցի մասին վերջին որոշումը տալու էր . նախարարներէն կուշտով . Երբով . Իշխան Օպոլէնսքի և թօլսթոյ ընտրութեան իրաւունքի մասնակցելու կոչմն էին :

Ենթադրուի թէ՛ կառավարութիւնը աւելի խիստ միջոցներ ձեռք պիտի առնէ գործաթողներէ հանդէպ . նախ . Տուրնովօ հրամայած է ձեռքազրկել յիշափոխութեան պարագլուխները . Արդէն հարիւր հոգիէ աւելի ձեռքազրկուած կան . Ասոնք Սիպիր պիտի սքսորուին :

— Բուսովովիզգայէ կը հեռագրեն .— Օտէտայի խորհրդանները կը տարածայնեն թէ՛ շարժուած մէջ քաղաքը արեան մէջ խեղ պելու են . Բողաքսցիք ահ ու սարսափի մէջ են . Ձինուսակաւու թիւեր քաղաքացիները հանգստացնելու համար ցրուած է յայտարարութիւններ որով կապահովէ թէ՛ զօրքը . խուլիզաններու . ինչպէս նաեւ անոնց միացած օտակաեակներ պաշտօնեաներու անդթութեանց դէմ վիրենք պիտի պաշտպանէ :

— Լօնտօն .— Թօքիոյէ կը հեռագրեն . Ճարտնա հասած գերմանական շոգենաւի մը նաւաստիները կը պատմեն թէ՛ Վլատիվոսթօքի մէջ գտնուած ցամաքային և ծովային զօրաբաժինը . աւարած և հրկիզած է քաղաքը ու յետոյ ցրուած են :

— Վիէննա — Հիւսիսային Ռուսիայէն եկած ճամբորդները կը պատմեն թէ . ռուսական կայսրութեան այն մասը ընտրուիին աւերուած է . խուլիզանները ազարակներ հիմնովին աւերած և բոլոր անասունները կոզոպտուած են :

— Օտէտայի շէքաթէրիինսքայա՞ պողոտային մէջ ռուս մը նետուած է . սակայն կարեւոր հետեւանք մը ունեցած չէ . Այս առթիւ բանտարկուած են վեց հոգի . նոյն փողոցին մէջ խուլիզանները շատ մը վաճառատներ հրկիզած և աւարի տուած են :

— Բեթերսպուրկ .— Օրը իսպաղանցաւ . Մոսկուայի Պոլուսարիում պարտէզին մէջ . յիշափոխականները շրջապատուած են զինուորներէ . Ամէնքն ալ կրցած են փախչիլ ու ապաստիլ . միայն 60 հոգի ձեռքազրկուած է . Թափօրներ յիշափոխական երգեր երգելով . կարմիր գրչակներ պարզած կանցնին փողոցներէ . Գօլաքները և զինուորները անոնք կը ցրուեն տասնց զէնքի գիմնու :

Բեթերսպուրկ .— Կառավարական թերթի մէջ հրատարակուած պաշտօնական ծանուցագիր մը . խորհուրդ կուտայ Բեթերսպուրկի բնա շուրթեան հանգիստ մնալ և շուրջուիլ տարածայնութիւննէ :

Ստիկանապետը ձեռք առած է հարկ եղած միջոցները մայրաքաղաքի բնակչութեան անգործութեան և ապահովութեան համար :

— Կայսերական հրովարտակ մը . նահանգապետներուն կը հրամայէ . թոլատրիլ հողատէրերուն կազմել իրենց հաշույն ծիտուր և հետեւակ պահակներ . Այս պահակներուն զէնքերը միայն կառավարութեանէ ձրիապէս տըրուելու են . Երկաթուղիները որ Բեթերսպուրկի հետ կապուած են կանոնաւոր կ'երթեւեկեն . կայսրանները զինուորներէ կը պահուին :

— Մոսկուա .— Պեղուսիում պարտէզին մէջ . բարձրագոյն յիշափոխական ժողով մը եկաւ . որ յայտարարուեց զինուած յիշափոխութեան մէջ . Ժողովը շրջապատուած էր զինուորներով . Ատենախօս մը հասարակաց վայրէն . կը հրաւիրէ ժողովորդը միտնալ զինուած յիշափոխութեան . սպաննեցին :

— Բեթերսպուրկ .— Մոսկուայէ կիմացնեն թէ՛ զեկա . Տի գիշերը հետեւակ զօրաց վաշտ մը միտնելի տունը պաշարեցուր պիտի գումարուէր յիշափոխականներու գործադիր ժողովը . Տունէն զինուորներու վրայ երկու ուժանակ նետուած է . որ սպաննած է երկու զինուոր և մէկ սպայ :

Այն ժամանակ հրամայուած է զօրքերուն ռմբակոծել տունը արագահարուածեանով :

Վաւուտեան մամը 4ին պաշարուածները անձնատուր եղած են . Ձերբակալուած են 120 տղամարդիկ և մի քանի կիներ . Անոնց քով գտնուած է 15 հատ վեց հարուածեան . 15 հատ Գարապին և 13 ռուս :

Անձնատուր ըլլալու առաջին հրաւերին . յիշափոխականները պատասխանած են հրացանաձուլութեամբ և ռուս մը . սակայն տեսնելով որ կը ռմբակոծուին . պարզած են ճերմակ դրօշակ :

Ձօրքը պարտեցուցած է կրակը . սակայն այն վայրկեանին . յիշափոխականներու մէջ ծագած է անհամաձայնութիւն . տունէն

արձակուած են վերստին հրացանի զեպակներ . իսկ զօրքը պատասխանած է . արագահարուածեանով և հրացանաձուլութեամբ . միայն այն ժամանակ . յուսակուոր . յիշափոխականները անձնատուր եղած են .

Պաշարուածներուն մէջ 5 հոգի մեռած և 50 վիրաւոր կան եղեր . երբ զինուորները և դատական պաշտօնեաները մտած են տունը . անոնք մէն մի քաղափոխի հանգիպած են պատնէշներու :

Անձնատուրները . առանց ու է միջադէպի առաջնորդուած են բանտ . Հակառակ 500 բուսիլի սուրգանքի սպանալիքին . ճամբուն ամբողջ երկայնութեան մարդիկ գուռներէն և պատուհաններէն կը գրտէին ձեռքազրկուածները :

Ձերբակալուելէն վերջ . պաշարուածներէն մէկ քանիսը փորձած են փախչիլ . գրացի տներէ նետուած պարաններու օգնութեամբ .

— Բեթերսպուրկ .— Երկաթուղիներու վարիչները որոշեցին ընդհանուր գործադուլ ընել . Բեթերսպուրկի և Մոսկուայի գործաւորներուն կոմիտէները . իրաց առեալ ուսեստ ծախոյ խանութպանները նոյնպէս ընդհանուր գործադուլ ընել քուէարկեցին :

Ստար երկիրներու հետ հարգակցութիւններու խլուսէ կը վախցուի :

Յիշափոխական ռամկապետական ընկերվարականներու . գործաւորներու կազմակերպիչ մարմինը և գրեպայիններու միութեան կուսակցութիւնը իրենց ստորագրութեան տակ յիշափոխական կոչ մը հրատարակելով . կը բացատրեն ընդհանուր գործադուլ ընելու սկզբնապատճառը և կը յայտարարեն թէ՛ տէրութեան և յիշափոխութեան մէջ ամենակատար պայքարը սկսած է :

Յիշափոխականներու կեդրոնական կոմիտէն հետեւեալ կոչը ուղղած է ժողովուրդին .

Կառավարութիւնը վերջնականապէս կուրի կ'սկսի ժողովուրդին դէմ . Վիթթէի ընթացքը ժողովուրդին իրաւունքներուն բռնաբարում մըն է . կը յայտարարենք ընդհանուր գործադուլ և պիտի կուրիք մինչև վերջին կաթիլ մեր արիւնին . Թող այդ մարդը գործաւորներու արիւնով յագենայ :

Վարչաւեայի մէջ ընկերվարական հրէաներու կեդրոնական կոմիտէն յայտարարութիւնով մը կը հրաւիրէ ժողովուրդը զինուած ապստամբութեան գիմնու :

— 0 —

Печатница на П. Глушковъ С.-неВария,